Այսոցիկ ոչ զոք 'ի մերոցս կարծեմ հակառակել. նա մանաւանդ խիթամ, թէ փաստս եւս ոք 'ի վերայ իւրոցն տենչից եւ յիմոց բանիցս առեալ, յանդիմանել զիս նկրտիցի, ասելով. թէ զի այդպէս է՝ ընդէ՞ր ոչ ուրեմն եւ եւս երկարագոյն եւ մանրամամն աւանդեցեր մեզ զտեղագիր ցանկալի հայրենեացս, որում փափագեալ մնայաք: — Յուշ այդպիսումն սիրաքանի առնեմ զառ 'ի սկզբանն օրինակաւ ասացեալս, եթէ յերկար եւ յերկրապարփակ ուղեւորութենէ դարձ առնեմք. իբրեւ մասն ընդ բոլորի կամեցեալ պատշաճեցուցանել եւ զայս գործ ընդ քաղաքական աշխարհագրութեանս, եւ ոչ թէ որպէս 'ի միայնակ 'ի մերում երկրիս յածելով ընդ հանուր կոյս, ամենայն նորայոցն ցանկալեաց եւ պիտանեաց կամիցիմ հանդէս առնել աստանօր. զի թէ այնպիսի ինչ կամէաք առնել առ 'ի զնորա եւ զմեր իղձս լնուլ, յոլովագոյն եւս ժամանակաց պէտք լինէին մեզ. եւ թէպէտ կարող էաք զաշխարհաց ոմանց եւ զգաւառաց ընծայել նկարագիրս ձիգս եւ բազմավէպս, օժանդակութեամբ նախնեացն մերոց յիշատակարանաց եւ նորոց տեղագրաց եւ ուղեւորաց մասնաւոր գաւառաց, եւ լուսաւորել զնոսին՝ նոցա եւ մեր ջանիւք, սակայն մնացելոցն մթութիւն թխագոյն եւս թուէր թանձրանալ. յաղագս այսորիկ ոչ թուեցաւ մեզ պատշաճ եւ վայելուչ՝ զմիոյ մասնէ երկայնս աւանդել, եւ զայլոց կարճ 'ի կարճոյ կամ թէ զանխուլ անցանել, մինչեւ քննեալ մի առ մի զամենայն. ապա եւ օրէն համարեցաք յայսքան եւ յայս ձեւ չափաւորել այժմ զՏեղագիրս:

Սակայն մի եւ զայս ոք թեթեւ եւ վարկպարազի համարիցի աշխատութիւն. քանզի եւ 'ի համառօտութեան իւրում ունի սա՝ որպէս յուսամք, տալ ծայրալիր ծանօթութիւն նոր զընդհանուր կողմանց Հայաստան աշխարհի, զբնական եւ զքաղաքական, որքան ոչ է ուրեք ցարդ ամփոփեալ՝ յետ երկասիրութեան բազմերախտ Հօրս մերոյ Ինճիճեան վարդապետի, որոյ պատուական մատեանն՝ Նոր Հայաստան, կիսադարեան հնութեամբն չունի արդ զնորագունիցս լնուլ փափագ. Են են եւ այլոց յետ նորա մանրապատում նկարագիրք նա եւ մատեանք ողջոյն, այլ զգաւառաց եւ զտեղեաց ոմանց, եւ ոչ ընդհանուր, որպիսիք են Տեառն Յովհաննու Շահխաթունեան վարդապետի Ստորագրութիւն Էջմիածնայ եւ հնգեցուն գաւառաց Արարատայ, (տպագրեալ 'ի Ս. Էջմիածին յամին 1842). եւ Տեառն Սարգսի Ջալալեան վարդապետի Ուղեւորութիւն 'ի Հայս սահմանակիցս Վրաց եւ Աղուանից, (տպագրեալ 'ի Տփխիս յամին 1842), եւ այլոց ոմանց՝ հրատարակեալք յազգային լրագիրս, կամ զոր մեք յիշեցաք 'ի յառաջաբանի Քաղաքական աշխարհագրութեանս: Արդ զայդ ամենայն յակն արկեալ մեր, եւ 'ի վերայ այնոցիկ 'ի ձեռին ունելով զպատուականագոյնն եւ զչեւ եւս հրատարակեալ վաստակ մերոյս արգոյ եւ հոգեկից եղբօր Հ. Ներսէսի վարդապետի Սարգսեան, բազմամեայ ուղեւորի 'ի մասն Փոքուն եւ Մեծաց Հայոց, եւ հաւատարմագոյն ընդօրինակողի հայ արձանաց տեղեացն յորս շրջեցաւ, այլ եւ յօտարազգի ճանապարհագրաց ընթերցեալ առաւել քան զյիսնից տեղագրութիւնս կողմանց կողմանց Հայաստան աշխարհիս, եւ բաղդատեալ ընդ իրար եւ ընդ նախնեաց մերոց աւանդս՝ յերիւրեցաք զայս Տեղագիր: Ունէաք առաջի եւ զաշխարհացոյց տախտակս ոմանս ընտիրս, զԱնգղիացւոց ուղեւորաց, եւ զՌուսաց՝ զիւրեանց բաժնին, եւ զգեղեցիկ քառեակ տախտակսն Քոխայ գերմանացւոյ ուղեւորելոյ 'ի Հայս եւ 'ի Կովկաս (յամսն 1836-44, K. Koch, ճարտարեալ 'ի Պեռլին յամին 1850), եւ զընտրելագոյնն բնաւից եւ զնորագոյն զՌայմերայ (Dietrich Reimer, անդ 'ի Պեռլին 'ի 1854), որք ճշգագոյն եւս քան զվաղ հրատարակեալն առ 'ի մէնջ եւ զյարեալն 'ի սմա զփոքր աշխարհացոյցս Հայաստանի՝ ցուցանեն զսահմանս վիճակաց եւ զբարձրութիւնս վայրաց, առաւելեալք եւ ընդարձակութեամբ իւրեանց: